

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
№ 53/09

Քաղ. Երևան

26 փետրվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Գ.Յ.Ադամյան, Բ.Շ.Վարդանյան, Ա.Վ.Բաբայան և Լ.Ե.Ասցատրյան (քարտուղար), իր 2009թ. փետրվարի 26-ի նիստում (արձանագրություն № 68/1) քննարկեց «EGIS GYOGYSZERGYAR RT»(HU) ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Նազարյանի 2008թ. սեպտեմբերի 9-ի բողոքը՝ Actavis Group PTC ehf (IC) ընկերության «OLANZIN» (IR 915600) ապրանքային նշանի գրանցումն անվավեր ծանաչելու խնդրանքով:

Բողոքարկողի փաստարկները հետևյալն են:

29.03.2006թ. «EGIS GYOGYSZERGYAR RT»(HU) ընկերությունը գրանցել է «OLZIN» IR885361 ապրանքային նշանը, որի գրանցման գործողությունը տարածվել է նաև Հայաստանի Հանրապետությունում՝ ԱԾՄԴ 05 դասի «դեղագործական պատրաստուկներ՝ մարդու կողմից օգտագործելու համար» ապրանքների նկատմամբ: 15.09.2006թ. Actavis Group PTC ehf (IC) ընկերությունը գրանցել է «OLANZIN» (IR 915600) ապրանքային նշանը, որի գրանցման գործողությունը նույնպես տարածվել է Հայաստանի Հանրապետությունում՝ նույն դասի «դեղագործական պատրաստուկներ և նյութեր» ապրանքների համար: Բողոքարկողը խնդրում է անվավեր ճանաչել «OLANZIN» (IR 915600) ապրանքային նշանի գրանցման գործողությունը, քանի որ դրա նկատմամբ իրավական պահպանությունը, իր կարծիքով, տրամադրվել է «Ապրանքային և սպասարկաման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև օրենք) 12-րդ հոդվածի պահանջների խախտմամբ:

Իր պահանջը հիմնավորելու համար բողոքարկողը՝ առաջնորդվելով «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ՝ նաև կարգ) 97-100-րդ կետերով, համեմատում է «OLZIN» և «OLANZIN» ապրանքային նշանները ձայնային և գրաֆիկական նմանության տեսակետից և հաստատում այն փաստը, որ դրանք շփոթուբերելու աստիճան նման են իրար, քանի որ երկու դեպքում էլ տարբերվում են միայն մեկ՝ «-AN-» միջանկյալ վանկով: Ինչ վերաբերում է իմաստային առումով նման լինելուն, ապա բողոքարկողը նշում է, որ, ինչպես «OLZIN» դեղամիջոցը, այնպես էլ «OLANZIN»-ը պատրաստված են «olanzapinium» միջազգային չարտոնագրված անվանմամբ (MHH) ազդող նյութի հիմքի վրա: «Olanzapinium»-ը մտնում

Ե շիզոֆրենիայի և հոգեկան այլ խանգարումների համար նախատեսված դեղամիջոցների քիմիական բաղադրության մեջ, նրա հիմքի վրա պատրաստված առավել հայտնի ապրանքային նշաններն են Zyprexa, Zyprexa Zydis, Zalasta, Zolafren: Բողոքարկողը շեշտում է, որ, ինչպես երևում է, «olanzapinium» հիմքի վրա նշված դեղամիջոցներ արտադրողները խուսափում են միջազգային չարտոնագրված անվանմանը նմանվող անվանումների օգտագործումից, հետևաբար, բողոքարկողը համարում է, որ IR 915600 միջազգային հայտի սեփականատիրոջ մոտ ևս չկա այնպիսի անվանման ընտրության անհրաժեշտություն, որը կնմանվի «olanzapinium» ազդող նյութին և ապրանքային նշանների նման լինելու պարագայում մոլորության մեջ կգցի սպառողին:

Այսպիսով, հիմք ընդունելով վերը նշված հանգամանքները և առաջնորդվելով օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, բողոքարկողը համարում է, որ «OLANZIN» (IR 915600) ապրանքային նշանին իրավական պահպանության տրամադրումը՝ «EGIS GYOGYSZERGYAR RT» (HU) ընկերության անունով գրանցված ավելի վաղ առաջնությամբ շփոթելու աստիճան նման «OLZIN» (IR 885361) ապրանքային նշանի առկայության դեպքում, կարող է մոլորության մեջ գցել սպառողին, և այդ պատճառաբանությամբ խնդրում է «OLANZIN» (IR 915600) ապրանքային նշանի գրանցումը անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետությունում:

«OLANZIN» IR 915600 վիճարկվող ապրանքային նշանի սեփականատեր Actavis Group PTC ehf (IS) ընկերությունը՝ սահմանված կարգով ծանուցված լինելով բողոքի նյութերին, 2009թ. հունվարի 19-ին իր կողմից լիազորված ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Պետրոսյանի միջոցով բողոքարկման խորհուրդ առարկություն է ներկայացրել (մտից հ. 33) 2008թ. սեպտեմբերի 9-ին գործակալության բողոքարկման խորհուրդ ներկայացված «EGIS GYOGYSZERGYAR RT» (HU) ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Նազարյանի բողոքի դեմ:

Նամակում, մասնավորապես, բերված են մի շարք դեղերի օրինակներ, որոնց անվանումները նմանեցված են իրենց հիմքը հանդիսացող միջազգային չարտոնագրված անվանմանը, ինչը դարձել է համաշխարհային պրակտիկա, և նմանատիպ գրանցում ստացած ապրանքային նշանները, թեև իրար նման են, սակայն շարունակում են համատեղ գոյատևել, ինճպես, օրինակ, Լեհաստանում բողոքարկողին պատկանող «OLZIN» (IR 885361) միջազգային գրանցումը և լեհական ընկերության անունով գրանցված «OLZAPIN» ապրանքային նշանը: Ելնելով բերված փաստարկներից, Actavis Group PTC ehf (IS) ընկերության ներկայացուցիչը չի տեսնում «OLANZIN» (IR 915600) ապրանքային նշանի գրանցումը չեղյալ ճանաչելու համար հիմքեր և խնդրում է, որ բողոքարկման խորհուրդը մերժի բողոքը:

18.02.2009թ. մտից հ.131 նամակով ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Նազարյանը իր պատասխանն է ներկայացրել Ա.Պետրոսյանի գրության վերաբերյալ, որն ուսումնասիրվել է կոլեգիայի կողմից և հաշվի է առնվել քննարկման ժամանակ:

Ներկայացված բողոքի քննարկման արդյունքում կոլեգիան պարզել է, որ ինչպես բողոքում, այնպես էլ վերը նշված նամակում բերված են մի շարք փաստարկներ, որոնք, ըստ բողոքարկողի, հիմնավորում են «OLANZIN» IR 915600 ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու իր

խնդրանքը: Այսպես, բողոքարկողը ակնհայտ է համարում «OLZIN» և «OLANZIN» ապրանքային նշանների ձայնային և գրաֆիկական նմանության փաստը, քանի որ երկու դեպքում էլ նշանները տարբերվում են միայն մեկ՝ «-AN-» միջանկյալ վանկով, ուստի և եզրակացնում է, որ օրենքի 12-րդ հոդվածի 1 կետի «բ» ենթակետի համաձայն, «OLANZIN» IR 915600 ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման Հայաստանի տարածքում, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, նույն կամ նույնատիպ ապրանքների համար առանց գրանցման պահպանվող ավելի վաղ առաջնությամբ՝ «EGIS GYOGYSZERGYAR RT.» (HU) ընկերության «OLZIN» IR 885361 ապրանքային նշանին, և կարող է մոլորության մեջ գցել սպառողին:»

Կոլեգիան, հաշվի առնելով ներկայացված փաստարկները, ընդունում է «OLZIN» և «OLANZIN» ապրանքային նշանների նման լինելու փաստը: Ինչ վերաբերում է սպառողին մոլորության մեջ գցելու հավանականությանը, ապա կարգի 101-րդ կետի 2-րդ պարբերությամբ սահմանված է, որ «շփոթելու աստիճան նմանությունը որոշելիս պետքե՛հաշվի է առնելվում նաև այն ապրանքների առանձնահատկությունը, որոնց համար գրանցման է ներկայացված նշանը»:

Ինչ վերաբերում է Ա.Նազարյանի 18.02.2009թ. նամակին, ապա բողոքարկողը բողոքարկման խորհրդի ուշադրությունը հրավիրում է, մասնավորապես, այն հանգամանքին, որ «մինչև կոնկրետ սպառողին՝ հիվանդին հասնելը դեղի առաջնային սպառողը հանդիսանում է բժիշկը և դեղը վաճառողը՝ դեղագործը: Իսկ բժիշկը դեղատոմս գրելուց դեղ արտադրողի անվանումը պարտավոր չէ նշել, քանի որ որևէ արտադրողի ապրանքները այլ արտադրողի նույնատիպ ապրանքներից ստեղծվել է մի հասկացություն, որն էլ կոչվում է ապրանքային նշան: Դեղագործը իր կրթությամբ շատ հեռու է ապրանքային նշաններից, նա ուղղակի նայում է դեղի անվանումը: Վեճի առարկա դարձած ապրանքային նշանների դեպքում շփոթություն կարող է առաջանալ նաև բժշկի և սպառողի մոտ»:

Սակայն բժիշկ-դեղատոմս-դեղատուն ցանցում շփոթության առկայությունը հաստատող և ոչ մի ապացույց բողոքարկողի կողմից չի ներկայացվել, ուստի և կոլեգիան համարում է, որ բողոքարկողը խնդրին տեսականորեն է մոտենում, մինչդեռ գրանցումը չեղյալ ճանաչելու համար պետք է փաստացի հիմքեր ունենալ:

Բացի դրանից, այդ հարցում ձևավորվել է հստակ մոտեցում, և փորձագետը՝ դեղամիջոցների անվանումներին իրավական պաշտպանության տրամադրման հարցը քննարկելիս, պարտադիր առաջնորդվում է կարգի 101-րդ կետի պահանջներով, այն է՝ «եթե նշանը գրանցման է ներկայացված այնպիսի ապրանքների համար, որոնք իրացվում են միայն հատուկ սպառման շրջաններում կարգով, մասնավորապես՝ հատուկ մասնագետների օգնությամբ, կամ միայն մասնագիտացված կազմակերպություններին, օրինակ՝ բժշկի դեղատոմսերով, դեղատան մասնագետների կողմից, ապա անհրաժեշտ է հաշվի առնել, որ տվյալ պարագայում «շփոթելու աստիճան նմանությունը» պետքե՛տարածելվում է և կիրառելվում հատկապես այդ մասնագետների կամ կազմակերպությունների համար նկատմամբ, այլ ոչ թե բոլոր հնարավոր սպառողների», այսինքն՝ միջին սպառողի: Հետևապես,

կոլեգիայի կարծիքով, բողոքարկողի նամակում բերված այդ փաստարկն ևս ծանրակշիռ հիմք չէ «OLANZIN» IR 915600 գրանցումը անվավեր ճանաչելու համար:

Բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում քննարկելով ներկայացված նյութերը և առարկությունները, ինչպես նաև հաշվի առնելով կոլեգիայի կողմից բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետևյալ եզրակացության:

Չարցի քննարկման ընթացքում բողոքարկման խորհրդի մոտեցումը եղել է նույնը, ինչ որ ձևավորվել է փորձաքննության կողմից դեղերի գրանցման նկատմամբ և ամրագրված է կարգի 101-րդ կետում: Այդ առանձնահատուկ մոտեցումը ցուցաբերվում է դեղերի հարցում մի շարք պատճառներով, առաջինը. սպառողների շահերի տեսակետից, այն առումով, որ տարբեր կատեգորիայիների սպառողները չփոթեն դեղերը և մի դեղի փոխարեն չընդունեն մեկ այլ դեղ (տվյալ դեպքում դա, կարծես թե, բացառվում է, հաշվի առնելով, որ երկու դեղերի համար էլ հիմք է ծառայում «olanzapinium» նյութը): Երկրորդը. դեղը շրջանառության մեջ է դրվում մասնագիտացված ցանցի միջոցով, այսինքն, եթե շփոթություն առաջանա, ապա այն պետք է առաջանա հենց տվյալ ցանցում՝ բժիշկ-դեղատոմս-դեղատուն, սակայն վիճարկվող «OLANZIN» IR915600 գրանցման հետ կապված նման խնդիր նույնպես առայժմ չկա:

Չաշվի առնելով, որ ապրանքային նշանների հայտերը գրանցվել են վեց ամսվա տարբերությամբ, և առաջինը՝ «OLZIN»-ը չէր հասցնի այնպիսի համբավ ձեռք բերել, որ «OLANZIN»-ի սեփականատերը աշխատեր իր անունը նմանեցնել դրան, հավանական է, որ ընտրելով այդ անվանումը, Actavis Group PTC ehf (IS) ընկերությունը պարզապես ուզեցել է նմանացվել սեռային անվանմանը: Ուրիշ հարց, որ «OLZIN» ապրանքային նշանի սեփականատերը ունի մտավախություն, որ «OLANZIN»-ը, որպես հոգեմետ դեղերի հայտնի շարքի նոր անուն, նրան դուրս կմղի շուկայից և վնաս կհասցնի իր տնտեսական շահերին, հատկապես, հաշվի առնելով, որ նա ավելի շատ է նման իր «generic» անվանման, քան «OLZIN»-ը: Սակայն բողոքարկման խորհուրդը համարում է, որ պետք է հաշվի առնել նաև այն կարևոր հանգամանքը, որ տվյալ հարցի բոլոր հանգամանքներն ուսումնասիրվում և քննարկվում են պարզելու համար Չայաստանի շուկայում «OLZIN» և «OLANZIN» ապրանքային նշանների շփոթելու և կողմերի շահերի բախման հավանականությունը, մինդեռ այսօր այդ շուկայում նշված անվանումներով դեղերից չկա և ոչ մեկը: Սովորաբար առևտրային անվանումները նմանացնում են իրարից սպառող «գողանալու» համար, տվյալ դեպքում նման խնդիր չկա: Այդ առումով «EGIS GYOGYSZERGYAR RT.» (HU) ընկերության ներկայացուցիչ Ա.Նազարյանը պարզաբանումը եղավ այն, որ արտադրողը ուզում է շուկա մտնել և ուզում է, որ շուկան մաքուր լինի, իսկ հայտնի դեղերից նման են միայն վեճի առարկա դարձած այդ երկուսը, ինչը, կոլեգիայի կարծիքով, ևս հիմնավոր փաստարկ չէ «OLANZIN» IR915600 նշանի գրանցումը անվավեր ճանաչելու:

Չաշվի առնելով այն հանգամանքը, որ «EGIS GYOGYSZERGYAR RT.» (HU) ընկերության ներկայացուցիչ ՅՅ արտոնագրային հավատարմատար Ա.Նազարյանի բողոքում բերված փաստարկները հիմք չեն հանդիսանում եզրակացնելու, որ նշանի գրանցումը հակասում է օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներին, բողոքարկման խորհուրդը համարում է, որ

«OLANZIN» IR915600 նշանի գրանցումը կատարվել է օրինական հիմքերով, հետեապես այն Հայաստանի Հանրապետությունում անվավեր ճանաչելու վերաբերյալ բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» 96-99-րդ և 101-րդ կետով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 74-րդ կետի «բ» ենթակետով, բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «EGIS GYOGYSZERGYAR RT» (HU) ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Նազարյանի 2008թ. սեպտեմբերի 9-ի բողոքը և Actavis Group PTC ehf (IS) ընկերության «OLANZIN» (IR 915600) ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետությունում թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
Նախագահ

Ա.Ազիզյան